ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.11-3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. օգոստոսի 13-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության խորհրդական
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 4 (չորս) հայտ՝

- «Աութսորս» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի,
- «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման նպատակով նպատակով ներկայացված թվով 3 (երեք) կազմակերպության՝

- «Աութսորս» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- «Աութսորս» ՍՊԸ-ի կողմից կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի 2.4 կետի պահանջներին, այդ թվում՝ հայտի տեխնիկական չափորոշիչ բաժնում ներկայացված չէ հարկային մարմիններից տեղեկանք ընկերության հարկային պարտավորությունների մասին,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրագիրը չի համապատասխանում հրավերի 2.4.1 կետի պահանջներին, հստակ ներկայացված չէ նշված կետով նախատեսված միջոցառումների կազմակերպման նկարագրությունը: Բացի այդ, կազմակերպության կողմից ծրագրային առաջարկով ներկայացված ժամկետը (նոյեմբեր 2024) չի համապատասխանում աշխատանքային պլանով նախատեսված գործողությունների համար ներկայացված ժամկետներին (օգոստոսից-նոյեմբեր),
- «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրագիրը չի համապատասխանում հրավերի 2.4.1 կետի պահանջներին, հստակ ներկայացված չէ նշված կետով նախատեսված միջոցառումների կազմակերպման նկարագրությունը: Բացի այդ, կազմակերպության կողմից ծրագրային առաջարկով ներկայացված ժամկետը (հոկտեմբեր 17-20, նոյեմբեր 27-30) չի համապատասխանում աշխատանքային պլանով նախատեսված գործողությունների համար ներկայացված ժամկետներին (սեպտեմբերից-դեկտեմբեր):

Մեկի՝

- «Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի համար սահմանված չափորոշիչներին: Միաժանամակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը իր կողմից ներկայացված պորտֆոլիոյում ներառել է տեղեկատվություն կնքված պայմանագրերի մասով, առաջարկել ընկերությանը 1 աշխատանքային օրվա ընթացքում լրացուցիչ ներկայացնել վերոգրյալ պայմանագրերի տեսապատճենները:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 3 (երեք) կազմակերպության՝

- «Աութսորս» ՍՊԸ-ի,
- «ԼԱՔՇԵՐԻ ՎՈՅԱԺ» ՍՊԸ-ի,
- «ԱՄԹՐԵՎԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ **«Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ն:**

3. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.11 կետով նախատեսված **«Աջակցություն ՄԱՅՍ (MICE՝ Meetings, Incentives, Conferences, Exhibitions) միջոցառման կազմակերպմանը»** միջոցառման իրականացման համար՝

- **«Բիզնես Ինսայթ» ՍՊԸ-ի հետ՝ 43.350.000** (քառասուներեք միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ) գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____